



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019 թվականի թիվ 19-Ա

ք. Երևան

#### **«Հ3 ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով իր կողմից կազմված 2019 թվականի փետրվարի 20-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2019 թվականի փետրվարի 20-ին «Հ3 ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Հ3» հեռուստաընկերության կողմից 2019 թվականի հունվարի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում առանց իրավական հիմքերի ոչ սեփական հեռուստահաղորդումներ վերահեռարձակելու հիմքով:

Հանձնաժողովը 2019 թվականի փետրվարի 5-ի թիվ 05-66 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ «Հ3» հեռուստաընկերության կողմից 2019 թվականի հունվարի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում վերահեռարձակված ոչ սեփական հեռուստահաղորդումների իրավական հիմքերը ներկայացնելու համար:

Ընկերության կողմից 2019 թվականի փետրվարի 18-ի թիվ Ե/2/19-009 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել «Հ3» հեռուստաընկերության կողմից 2019 թվականի հունվարի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում վերահեռարձակված ոչ սեփական հեռուստահաղորդումների ցուցադրման իրավունքի պայմանագրերը, որոնք Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել և համադրվել են «Հ3» հեռուստաընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված հաշվառման մատյանի տվյալների հետ:

Ուսումնասիրության և համադրման արդյունքում հայտնի է դարձել, որ ներկայացված հաշվառման մատյանում նշված են «Հ3» հեռուստաընկերության կողմից վերահեռարձակված հեղինակային իրավունքի օբյեկտներ, որոնց իրավական հիմքերը բացակայում են Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերում:

Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 11-ի թիվ 9-Ա որոշմամբ Ընկերության նկատմամբ՝ 2018 թվականի դեկտեմբերի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում

առանց իրավական հիմքերի ոչ սեփական հեռուստահաղորդումներ վերահեռարձակելու հիմքով կիրառվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:

Ընկերության նկատմամբ գրավոր նախազգուշացում կիրառելուց հետո 2019 թվականին կրկին իրականացվել է նույն խախտումը՝ «Հ3» հեռուստաընկերության կողմից 2019 թվականի հունվարի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում առանց իրավական հիմքերի ոչ սեփական հեռուստահաղորդումների վերահեռարձակում է իրականացվել, ինչով թույլ է տրվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի իրավախախտում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Հեռուստառադիոհաղորդման արտադրության և հեղինակի մասին տեղեկատվության (ենթագրեր, ձայնային ներկայացում) ամբողջական հեռարձակումը պարտադիր է:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված հեռուստառադիոընկերություններն օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ծրագրերը կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը:

Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հեղինակային բացառիկ պայմանագրով իրավատերն օգտագործողին է փոխանցում ստեղծագործությունը որոշակի ժամկետում ու պայմանագրով նախատեսված սահմաններում օգտագործելու բացառիկ իրավունքը՝ պահպանելով ստեղծագործության օգտագործման իրավունքն այն մասով, որը նախատեսված է պայմանագրով: Այս դեպքում այլ անձանց կողմից ստեղծագործության

օգտագործումն արգելելու իրավունքը կարող է իրականացնել իրավասերը, եթե դա չի կատարում օգտագործողը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ նասի համաձայն՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասով, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ հոդվածով, 60-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

11 մարտի 2019թ.  
ք. Երևան